

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՇԵՍՑԱՆ ԱՐՔԱՆԵՐԻ
ԴՐԱՄԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐՄԵՆ ԽԱԶԻԿՑԱՆ

Դրամահատությունը հելլենիզմի դարաշրջանում քաղաքական ինքնուրույնության և պետական անկախության դրսևորման կարևորագույն ձևն էր: Միաժամանակ այն նաև քաղաքական քարոզչության առավել մատչելի և արածված եղանակներից էր: Հելլենիզմի դարաշրջանի ամեն մի տիրակալ, գալով իշխանության, սեփական պատկերով և անունով դրամ հատելու հոգ էր տանում: Այդ դրամները ծառայում էին միաժամանակ մի քանի նպատակի.

1. Նախ հնարավորություն էր ընձեռվում դրամաշրջանառության միջոցով իրազեկել տվյալ երկրի քաղաքական կարգավիճակը և հայտարարել արքայի վարած քաղաքական կուրսի մասին:
2. Դրամի վրա առկա դիմանկարի և մակագրության միջոցով ծանոթանում էին նորաթուխ տիրակալի արտաքինին և նրա իշխանության կարգավիճակին:
3. Դրամի գրության մեջ կիրառվող «աստված», «հելլենիստեր», «հայրասեր», «հոռմիասեր» և այլ տիտղոսային մականունները ռեզգծում էին նոր տիրակալի վարելիքը քաղաքականության ուղղվածությունը:
4. Իրոք տվյալ տիրակալի կարգավիճակում եամ էլ մատուց քաղաքականության մեջ որակական փոփոխություններ էին կատարում, դա սենատուման անտահատություն էր և ռատահատության մեջ: Նման դեպքում ետրող էր ժողովուրդը և միայն արտաքին տեսչությունները, որոնք ռատմանից մտահայտվելին անգամ հարևան դերագահ տիրակալի պատկերն ու տեսչությունները:
5. Այս ամենից բացի դրամահատությունն ուներ նաև կառույց տնտեսական ու մշակութային նշանակություն: Տվյալ տիրակալի անունով և ստատիկորով դրամների առատությունը արտաքին հզորության և հարստության արմատուն վկայությունն էր, ուրեմն և կարող էր մեծապես նաաստել երկիր հրատուելու տարանդիկ առևտրականների, դիտականների և արվեստագետների: Վերջիններս կարող էին հուսալ հովանավորություն ստանալ իրենց ծրագրերն ու մտահղացումներն իրականացնելու համար: Ասվածը հիմնականում բնորոշ էր և հայկական դրամահատությանը: Հայկական դրամահատությունը սկսվում է մ. թ. ա. III դարի կեսից, երբ Առաջավոր Ասիայում գերիշխում էր Սելևկյան տերությունը: Նրանից կախման մեջ գտնվող տիրակալները այս ժամանակ իրենց հատած դրամների վրա կրում էին «էպիստատ», «ստրատեգոս» կամ ենթակալությունն ընդգծող այլ տիտղոսներ: Երբ Սելևկյան տերությունը սկսեց թուլանալ, տեղական այն կառավարիչները, որոնք անկախություն ձեռք բերեցին, սկսեցին կիրառել «բասիլևս» տիտղոսը: Իրենց դրամներով վրա «բասիլևս» տիտղոսը կրում էին և Մոփր-Կամազենիի ժողովուրդի հայ արքաները: Հայ արքաների պահպանված դրամների շիտակ երեսին տիրակալի պատկերն է, իսկ հակառակ երեսին հունարեն մակագրություններ՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΜΟΥ; ΒΑΣΙΛΕΩΣ ΣΑΜΟΥ; ΒΑΣΙΛΕΩΣ ΑΒΔΙΣΑΡΡΕΣ (Արքայի Արսամի, Արքայի Սամոսի, Արքայի Աբդիսարեսի): Այս հայ արքաները կրում էին մարական նման,

րայց երկնյուղված թիարա, ի տարբերություն հարևան հելլենիստական միս-պետների կրած դիադեմայի: Կարելի է ենթադրել, որ այն հայկական թագնախատիպն է:

Արդեն իսկ այս առաջին հայկական դրամները որոշակի քարոզչական բովանդակություն էին կրում: Դրանք վկայում են, որ մ. թ. ա. III դարի կեսին Հայաստանի հարավ-արևելյան մարզերում բավականաչափ զարգացած են եղել ապրանքադրամական հարաբերությունները, և որ երկիրը ուներ բավարար ֆինանսական միջոցներ դրամատոմոսություն կազմակերպելու համար²: Հայկական դրամների չափ ու կշռի համապատասխանությունը հունական ստանդարտներին և հունարեն գրությունների առկայությունը խոսում են այն մասին, որ Հայաստանի այս շրջաններում հելլենիզմը զգալի տարածում ուներ և հունարենը հասկանալի լեզու էր բնակչության մի ստվար մասի համար: Արքայական ՁԶՄԱՅՍԶ տիտղոսի կիրառումը վկայում է, որ տվյալ տիրակալը, ուրեմն Երկիրը անկախ պետություն էին, իրավազոր տարածաշրջանի մյուս անկախ պետություններին:

Մ. թ. ա. III դարի վերջին սեևկյան տիրակալ Անտիոքոս III Մեծն ժամանակավորապես հպատակեցրեց հայկական պետությունները: Մոփր-Վոմագենի արքա Քսեռքսեսը դավաորաբար սպանվեց մ. թ. ա. 201 թ., Կոմառենին և Մոփր վերստիվեցին Սեևկյան տերության վարչական միավորներին: Մոփր: կառավարի՝ ստրատեգոսի տնտեսում, նշանակվեց նրանցում տոհմից Ջարհհր³: Համանաբար, Մոփր-Վոմագենեի հայոց թագավորության հպատակեցումից անմիջապես հետո Անտիոքոս III-ը հպատակեցրեց նաև Մեծ Հայքը, ուր ստրատեգոս կարգվեց նրանցում տոհմից Արտաշեսը⁴: Այս դարձությունների հետևանքով առժամանակ վերջ տրվեց հայկական դրամատոմոսությանը:

Հայկական դրամատոմոսությունը վերսկսվեց Արտաշեսյան արքաների օրոք Հայաստանի անկախության մերականգնումից հետո: Ցավոք, այս հարստությունը առաջին 3 արքաներից դրամներ մեզ հայտնի չեն: Հավանական է, որ նրանք դրամներ հատել են, որոնք, սակայն, չեն պահպանվել: Նման ենթադրության հիմք է տալիս Մովսես Խորենացու այն հաղորդումը, որ դինաստիայի հիմնադիր Արտաշես I-ը դրամներ է հատել իր պատկերով⁵:

Արտաշեսյան արքաների մեզ հայտնի առաջին դրամները պատկանում են Տիգրան I-ին (115—95 թթ.): Շիտակ երեսին Տիգրան I-ի պատկերն՝ հակառակ երեսին մակագրություն՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΕΛΑΗΝΟΥ (Արտաշի Մեծի Տիգրանի Հելլենասերի): Արքայի «հելլենասեր» տիտղոսը խոսում է հունական մշակութի նկատմամբ տիրակալի վրած հովանավորչական քաղաքականության մասին:

Հալեանան, դրամատոմոսություն ծաղկում աստեղ Տիգրան II-ի օրոք՝ (95—55 թթ) Հայաստանի հոռոգման և ընդարձակման ժամանակաշրջանում: Տիգրան II-ը Հայաստանին միադրեց Մոփրի թագավորությունը, իրեն ենթարկեց Ադիարենի, Օսրոհենի, Կոմագենեի, Վրաստանի և Աղվանքի արքաներին: Նա հաղթեց Պարթևստանին և ստիպեց իրեն զիջել «արքայից արքա» տիտղոսը:

² Հայաստանում հնուց ի վեր շահագործվող ոսկու հանքերի վերաբերյալ հաղորդում են դեռևս անտիկ հեղինակները: Թեև արծաթի հանքերի մասին կոնկրետ հաղորդումներ չկան, դրանց առկայությունն ու շահագործումը Հայաստանում անկասկած է, քանի որ գտնված հայկական դրամների մի զգալի մասը արծաթից է:

³ Strabo. XI, 14, 15.

⁴ Նույն տեղում:

⁵ Մ. Խորենացի. Պատմություն Հայոց, II, ԺԱ: Այս կապակցությամբ տեղին է հիշել, որ պատմաբանները երկար ժամանակ չէին վստահում Մ. Խորենացու հաղորդմանը, թե Արտաշեսը սահմանադրար էր եղել, մինչև որ պեղումների շնորհիվ գտնվեցին դրանցից:

⁶ P. Bedoukian. The coinage Artaxiads of Armenia. London, 1978, p. 9—12.

Մ. Թ. ա. 83 թ. Տիգրան II-ը վերջ տվեց Սելևկյան պետությունը՝ գրավելով Միդիան, Պաղեստինը, Փյունիկիան⁷:

Տիգրան Մեծի մեզ հասած դրամները (արծաթ և պղինձ) հատվել են Արտաշատի, Տիգրանակերտի, Անտիոքի, Դամասկոսի և այլ քաղաքների փողերանոցներում: Դրամների շիտակ երեսին Տիգրանի պատկերն է՝ հնգեզր հայկական թագով: Հակառակ երեսին պատկերված է տվյալ քաղաքի Tuche-ն իր ատրիբուտներով, նստած կամ կանգնած և հունարեն գրություն՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ (Արքայից արքա Տիգրանի) կամ ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ (Արքայի Տիգրանի): Առաջին տեսակի դրամները հատվել են հիմնականում Արտաշատի փողերանոցներում, երկրորդ տեսակը՝ Դամասկոսում կամ Անտիոքում⁸: Հավանաբար, «արքայից արքա» տիտղոսը, լավ հասկանալի լինելով բուն Հայաստանի, Իրանի և Միջագետքի երկրների համար առանձնակի իմաստ չի կրել Ասորիքի և Պաղեստինի հելլենական բնակչության համար: «Արքայից արքա» տիտղոսը վկայում է, որ Տիգրան Մեծը գերազանց էր Առաջավոր Ասիայի մյուս բոլոր տիրակալների նկատմամբ:

Տիգրան Մեծի որդու և հաջորդի՝ Արտավազդ II-ի դրամները նման են հոր դրամներին և ունեն ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ (Արքայից արքա Արտավազդի) գրությունը: Արտավազդի «արքայից արքա» տիտղոսը վկայում է, որ Հայաստանը, թեև կորցրել էր Տիգրան II-ի օրոք նվաճված տարածքները մեծ մասը, սակայն շարունակում էր մնալ տարածաշրջանի առաջնորդը տեռուսիտները: Արտավազդ II-ի տետրադրամներից մեկի վրա առկա է ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΕΩ ΘΕΙΟΥ ժամանակի հունարենում արդեն չկիրառվող հնաձև գրություն⁹: Պատմական աղբյուրներից հայտնի է որ Արտավազդ II-ը ազատ տիրապետում էր հունարեն լեզվին և նույնիսկ պիեաներ էր գրում հունարենով¹⁰: Կարևոր է ենթադրել, որ հնաձև գրություն կիրառելով, նա ցանկանում էր ընդգծել ռասական հունարենի իր հիմնությունը: Իսկ գրության մեջ ΘΕΙΟΥ (աստծո) տիտղոսի առկայությունը հավանաբար կարող է մկայել, որ Հայաստանում արքայի անձը աստվածացվում էր և միայն հետմահու, այլև կենդանության օրոք:

Դրամահատությունը սրպես բաղադրական բարոցություն միջոց օգտագործելու լավ օրինակ են հռոմեոսի սորամատ Անտոնիոսի հատած սոսաները՝ հստակ սորա Արտավազդ II-ին հաջորդելու և Հայաստանում ստանդարտ հատա Անտոնիոսի և Կլեոպատրայի աստեղծողները սորա սորա սորամենտի մաս առկա էր հետևյալ գրությունը. ANTONY ARMENIA DEVICTA//CIEOPATRAE REGINAE REGUM FILIORUM REGUM¹¹: (Անտոնիոսի Հայաստանին հաղթողի/Կլեոպատրայի թագուհիների թագուհու գրավել արքաների):

Նման մեկ այլ օրինակ են մ. թ. ա. 20 թ. Ոգոստոս կայսեր հատած դրամները: Հռոմեական գործերի օգնությամբ հալոց դահին հաստատվում Տիգրան III-ին և Հայաստանը մերտաբանելով հռոմեական սպանությունը, Ոգոստոս կայսրը հատել տվեց հորելյանական հատուկ սորամ-

⁷ Հայ ժողովրդի պատմություն (ուլ ճատորով). հ. 1, Երևան, 1971, էջ 558—565:

⁸ Հետաքրքիր է, որ իրենց ձևով դրամը շատ նման են Պարթևստանի արքա Միհրդատ II-ի (123—88) դրամներին, տե՛ս D. Sellwood. An Introduction into the coinage of Parthia. London. 1971, p. 56—57.

⁹ Y. T. Necessian, p. 58—74; P. Bedoukian, p. 12—25; G. McDonald, NC. 1902, p. 193—201; E. T. Newell Late Seleucid Mints (NNM), 1939, p. 98. Հետաքրքիր է, որ նրա ժամանակակից Պարթևստանի տրաներ Որոգես II-ը, Բակուր I-ը, Հրաշտ IV-ը սկսում են իրենց դրամների վրա նույնպես կրել «արքայից արքա» տիտղոսը, տե՛ս D. Sellwood, p. 118—175.

¹⁰ Y. T. Necessian, p. 25, N 129.

¹¹ Plut. Lucul. 29; Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, էջ 317:

¹² P. Bedoukian, p. 28.

ներ հետևյալ մակագրությամբ. CAESAR DIV. F. ARMEN. CAP. IMP: (Կեսար աստծո որդին Հայաստանը նվաճող իմպերատոր) և կամ ARMENI RECEPТА¹³ (Հայաստանը վերանվաճված):

Տիգրան III-ը (20—6 թթ.) իր զրամաների վրա կրում էր ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΟΠΑΤΟΡΟΣ ΚΑΙ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ (Արքայի Մեծի Տիգրանի հայրասերի և հելլենասերի), երբեմն էլ ΘΕΟΥ (Աստծո) մակագրությունը¹⁴։ «Մեծ արքա» տիտղոսը վկայում էր Հայաստանի քաղաքական ղեկի արդեն ղգալի թուլացման մասին։ «Հայրասեր և հելլենասեր մակագրությունը վկայում է Տիգրանի՝ հոր նկատմամբ տաժաժ սիրո և հունական մշակույթին նվիրվածության մասին։

Գրամահատությունը որպես քաղաքական քարոզչության միջոց օգտագործելու լավագույն օրինակ են վերջին Արտաշեսյանների զրամաները։ Գրանցանդրադառնալուց առաջ ներկայացնենք սլամական ղեպքերի համառոտ բնութագրը։

Տիգրան III-ի մահից հետո, առանց Հռոմի համաձայնությունը հարցնելու, հայոց գահը ժառանգեց Տիգրան IV-ը (6—1 թթ.), որը կառավարեց քրոջ՝ էրատոյի հետ միասին¹⁵։ Հռոմեական զորքերով Հայաստան է ներխուժում նրանց հորեղբար Արտավազ III-ը և հռչակվում հայոց արքա (5—3 թթ.)¹⁶։ Պահպանվել են Արտավազ III-ի զրամաները ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ // ΑΡΤΑΥΔΟΥ¹⁷ (Արքայի Մեծի//Արտավազի) գրությունը։ Սակայն Տիգրան IV-ը և էրատոն դաշնակցելով Պարթևստանի արքա Հուսհատ V-ի հետ, կառողջանում են Արտավազի հերիքի վտարել և վերահաստատվել գահին։ Համաձայն Գիոն Կասսիոսի հաղորդման, Տիգրան IV-ը սկզբում չի լիորձում Հռոմի ճանաչման արժանանալու Բալց կոր շատ շանդած Արտավազ III-ը հիմանդանում և մահանում է, նվիրենք է ուղարկում և նամակ գրում Օգոստոս կայսրին երեն «արքա» չկոչելու և կառծես թագամորուքությունը նրանից խնդրելու։ Օգոստոսը ղգուցանում, ոտ հալերը կմիանան արթններե հետ Հռոմի դեմ, ոտունում է նմերները և սլատոսսում Տիգրան IV-են հայոց արքա թաղադրել իր թոռ Գատու Կեսարի ձեռքում¹⁸։ Բալց Տիգրան IV-ը ղոհմեց Հայաստան ներխուժած լեռնական ղեղերի դեմ մարտում և նրանով էլ սվարտվեց Արտաշեսյան հարստությունը։

Հետո Հռոմի հովանավորությամբ Հայաստանում ղահակաեցեն հռոմեական Ատրպատականի արքաները, սլա և 6 թ. Հռոմի ֲգնությունը կարճատև կառավարեց Տիգրան V-ը՝ Արտաշեսյան արքաների հեռավոր ազգականը¹⁹։

Հայ ղրամաղետները տարակարծիո են Տիգրան IV-ի և Տիգրան V-ի ղրամաների հառում։ Այս հնոտի մանրամասները մի կողմ թողնելով նշենք, որ մեր կարծեռով Տիգրան IV-են մեռառմող ղրամաներեն նրանը տեոտ է համարել միայն ալսպես կոչված «նոր Տիգրանի» ղրամաները։ Առ ալսոր հայտների են ալո ղրամաների 3 տեսակ հետևյալ գրություններով²⁰։

1. ΒΑΣΙΛΕΥC ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ // ΕΡΑΤΩ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ ΑΔΕΛΦΥ

(Արալից արքայի Տիգրանի՝ էրատու Արքայի Տիգրանի քույրը)

¹³ Հայ ղողովրդի սլամություն, հ. 1, էջ 693—699։

¹⁴ Y. T. Nercessian, p. 81—82.

¹⁵ Tacit. II, 4.

¹⁶ Ibidem.

¹⁷ P. Bedoukian, p. 35—36; V. Ehrenberg & A. H. M. Jones. Documents illustrating the reigns of Augustus and Tiberius. Oxford, 1949, p. 102, N 181.

¹⁸ Cass. Dio LV, 10a, 4—5.

¹⁹ Հայ ղողովրդի սլամություն, հ. 1, էջ 710։

²⁰ Y. T. Nercessian, p. 87—88, N 182—184; P. Bedoukian, p. 3—39, N 165—167.

2. ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΡΑΝΕΣ // ΕΡΑΤΩ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΡΑΝΟΥ ΑΔΕΦΥ

(Արքայի Մեծի նոր Տիգրանի/էրատո Արքայի Տիգրանի բույրը)

3. ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΝΕΟΣ ΤΙΡΑΝΕΣ // ΚΑΙΣΑΡ ΘΕΟΣ ΘΕΟΥ ΥΙΟΣ ΣΕΒΑΣΤΟΣ

(Արքայի Մեծի նոր Տիգրանի/Կեսար Աստված Աստծո որդի բարերար)

Ակնհայտ է, որ առաջին տեսակի դրամները պետք է վերագրել Տիգրան IV-ի և էրատոյի կառավարման առաջին շրջանին, երբ Տիգրանը, ժառանգելով հայոց գահը, իրեն համարում էր իրապես անկախ տիրակալ և իր դրամների վրա կրում էր «արքայից արքա» տիտղոսը:

Դրամների երկրորդ տեսակը, հավանաբար, պետք է վերագրել այն ժամանակաշրջանին, երբ Տիգրան IV-ը կարողացել էր Պարթևստանի օգնությամբ երկրից վտարել Արտավազդ III-ին, բայց ստիպված էր «աթքայից արքա» տիտղոսից հրաժարվել հօգուտ Պարթևստանի տիրակալի՝ Հռոմի դեմ պայքարում ցուցաբերած օգնության դիմաց:

Իսկ դրամների երրորդ տեսակը հավանաբար պետք է վերաբերի Տիգրան IV-ի կառավարման վերջին շրջանին, երբ նա, ռեվանազիտական բանակցությունների մեջ մտնելով՝ Օգոստոս կայսեր հետ, հավաստիացում ստացավ՝ իշխանության ճանաչման մասին և, ընդունելով Հռոմի գերադասությունը, իր դրամների վրա ստիպված էր հատել Օգոստոս կայսեր պատկերը:

Մնում է ավելացնել, որ Տիգրան V-ին պետք է վերագրել այսպես կոչված «մորուքավոր Տիգրանի» դրամները, որոնց վրա արքան ունի պատկառելի մորուք և տարեց մարդու դիմագծեր:

Որպես քաղաքական քարոզչության միջոց դրամահատությունը լայնորեն կիրառում էր և հզոր Հռոմեական կայսրությունը: Հայաստանի առնչությամբ նման ակնառու օրինակ են Ձենոն-Արտաշեսի դրամները: 18 թ. Հայաստան ժամանեց Տիգրանի կայսեր եղբորորդի Գերմանիկոսը, որը լայն լիազորություններ էր ստացել կառավարելու հրամանալու Հռոմի անկախության ուժերի նկատմամբ: Հայաստանը Հռոմի գերիշխանության տակ պահպանեց համար Գերմանիկոսը հայոց արքա թագադրեց հայերի համակրանքը մալիոզ Պոնտոսի արքայազն Ձենոնին, որն ընդունեց «Արտաշես» արքայանունը: Այս կատակությունը հատկեցին արծաթադրամներ՝ GERMANICUS CAESAR TI. AUG. F. COS. II // ARTAXIAS GERMANICUS (Գերմանիկոս Կեսար Տիգրանի օգոստոս Կոնսուլ II/Արտաշեսի Գերմանիկոս) մակագրությամբ, որոնց պատկերված էր Գերմանիկոսի կողմից Ձենոն-Արտաշեսի թագադրման տեսարանը²¹:

Արտաշեսյան հաստատության անկումով հայոց բուսմահատությունը երկար ժամանակում ընդհատվեց:

Ինչ-եղրակաղություններ կառելի է անել հայոց հին դրամահատության մասին:

1. Գտնված հույական դրամների լիցքը վերաբերում է, որ մ. թ. ա. II—I դարերում Հայաստանում դրամահատությունը առավել քաղաքական, քան տնտեսական նշանակություն է ունեցել:
2. Քանի Հայաստանը հզոր պետություն էր և վերահսկում էր Առաջավոր Ասիայում անբնոր միջառգրան տնտեսությունը, այն անհրժեշտ էր հայաստանի կարիք և դրամահատությունը ժամանակավորապես ձառնում պարեց:
3. Ինչ-եղրակաղ Հայաստանի օղաքական անկումը, և թուլաղամ միջառգրան տնտեսությունը, հրկրում դրամահատությունը ընդհատվեց:
4. Ներքին առևտուրը Հայաստանում ուսումնասիրվող շրջանում թուլ էր բուրգացած, իսկ արտաքին առևտրի կարիքների համար կիրառվում էին արտվելուսես հռոմեական կամ պարթևական դրամներ:
5. Առաջադր չի դրանվել հայկական ոսկե դրամ, և պարզ չէ, արդյոք եղե՞լ ի աղալիսին:

21 Y. T. Necessian, p. 88, N 185—186; P. Bedoukian, p. 77, N 40—41.

ПОЛИТИЧЕСКАЯ ПРОПАГАНДА В МОНЕТНОМ ЧЕКАНЕ
АРТАШЕСИДСКИХ ЦАРЕЙ

АРМЕН ХАЧИКЯН

Резюме

Монетный чекан в период эллинизма являлся важнейшей формой проявления политической самостоятельности и государственной независимости. Одновременно чекан являлся одной из самых распространенных и доступных форм политической пропаганды. Все это типично и для монетного чекана древней Армении, берущего начало с III в. до н. э. На основании анализа можно сделать следующие выводы:

1. Монетный чекан в Армении в II—I вв. до н. э. имел скорее политическое нежели экономическое значение.
2. Пока Армения являлась мощной державой и контролировала международную торговлю на Ближнем Востоке, монетный оборот имел практическое значение и монетный чекан Армении переживал период подъема,
3. Когда начался политический упадок и был утерян контроль над международными торговыми путями, монетный чекан в Армении прекратился;
4. Внутренняя торговля в Армении при Арташесидях была развита слабо, а для внешней торговли обходились римскими или парфянскими монетами.
5. До сих пор не найдено золотой армянской монеты и неясно, была ли такая отчеканена.

POLITICAL PROPAGANDA IN ROYAL COINAGE OF THE
ARTAXIADS OF ARMENIA

ARMEN KHACHIKYAN

Summary

The monetary coinage in the Hellenistic period was one of the main forms of political independence. For Armenian kings it is also one of the available and practical methods of political propaganda, through which the political status of the country may be declared. Armenian coinage begins in the middle of III century B. C.

On the base of analysis of sources and the Armenian coins we came to the following conclusion:

1. The monetary coinage of Armenia in II—I centuries B.C. had more political than economical consequence,
2. Since the time when Armenia was a powerful state and controlled the international trade routs in the Near East, the monetary circulation had a practical aim and monetary coinage of Armenia pass a rapid ascent,
3. When the political decline of Armenia began and the control on international trade-routs was lost, monetary coinage of Armenia came to a stop;
4. The home trade of Armenia in this period was less developed and for external trade the Roman and Parthian coins were enough.
5. Since now no Armenian gold coin has been found, so it is not clear yet, was there such a coin strucked.